

Կարեն Բեքարյանը՝ ՀԿ նախագահի պաշտոնը չլքելու և ԱԺ-ում իր գործունեության գերակա ուղղությունների մասին

«Եվրոպական ինտեգրացիա»-ն իրենից երբեք չի ներկայացրել մարդկազմակերպություն, կառույցը կազմված է մեծ, կարող և կայուն թիմից՝ անկախ թիմի անդամների շատ դեպքերում տարբերվող քաղաքական հայացքներից: Մենք ունենք ձևավորված մշակույթ. ամեն անգամ կարևոր որոշումները կայացվում են ընդհանուր թիմի քննարկման արդյունքում»,- «Սպուտնիկ Արմենիա» մամուլի ակումբում կայացած ասուլիսի ժամանակ նշեց Կարեն Բեքարյանը՝ անդրադառնալով պատգամավորի մանդատը ստանձնելուց հետո «Եվրոպական Ինտեգրացիա» հասարակական կազմակերպության նախագահի պաշտոնը պահպանելու որոշմանը:

Նա նաև ընդգծեց, որ որոշումն ընդունվել է ՀԿ-ի անդամների մասնակցությամբ կայացած երեք քննարկումների արդյունքում, որից առաջինը տեղի է ունեցել դեռ երեք տարի առաջ:

«Իմ ԱԺ մանդատը վերցնելու հետ կապված մենք միայն մեկ քննարկում չենք ունեցել: Առաջին անգամ մեր քննարկումը մոտավորապես երեք տարի առաջ է տեղի ունեցել, երբ ես ստացա համամասնական ցուցակում ընդգրկվելու առաջարկը: Առաջին քննարկման արդյունքով թիմը նպատակահարմար գտավ, որ ընդունեմ առաջարկը և ես դա արել եմ՝ ամեննին չիմանալով, թե այդ պահին ցուցակի որ համարում եմ:

Երկրորդ քննարկումը եղավ, երբ Արփինե Հովհաննիսյանն արդեն նշանակվեց, որպես նախարար (օգտվելով առիթից ցանկանում եմ նրան հաջողություն մատթել պատասխանատու պաշտոնը ստանձնելու կապակցությամբ): Նշեմ, որ այդ քննարկումը տեղի է ունեցել մինչև իմ հրապարակայնորեն հայտարարելը, որ մանդատից չեմ հրաժարվում:

Երրորդը՝ «Եվրոպական ինտեգրացիա»-ի վարչության ընդլայնված նիստն էր, որը տեղի ունեցավ երկու օր առաջ՝ սեպտեմբերի 9-ին: Նիստն ավելի լայնածավալ էր և դժվար է այն համարել ուղղակի քննարկում: Նիստին դրվեց հիմնական հարցադրումը, արդյոք ես շարունակում եմ պաշտոնավարել որպես ՀԿ նախագահ և եթե այո, ապա ինչպե՞ս: Մեր թիմը որոշեց, որ ես շարունակում եմ մնալ, որպես ՀԿ նախագահ, սակայն, համաձայն մեր կանոնադրության, լիազորությունների վերաբաշխմամբ: Իմ լիազորությունների զգալի մասը հանձնվեց վարչության երկու անդամներին՝ նախագահի տեղակալ Հայկուհի Կաթրջյանին և պատասխանատու քարտուղար Իզաբելլա Բարխուդարյանին: Նիստի օրակարգը, որոշումները կան [կայքում](#)»:

Բեքարյանը նաև հավելեց, որ չի տեսնում որևէ շահերի բախում միաժամանակ ԱԺ պատգամավոր և ՀԿ նախագահ լինելու պարագայում:

«Նախ պետք է սահմանենք, թե ինչ ենք հասկանում շահերի բախում ասելով: Մարդուն հնարավոր չէ փոխել: Արդեն ավելի քան տասը տարի է ինձ համար եվրոպական

ուղղությունը եղել է գերակայությունների շարքում և այդպիսին շարունակելու է մնալ: Ուստի, այս առումով շահերի բախում չեմ տեսնում: Նույն են մնալու նաև իմ հետաքրքրություններն արտաքին հարաբերությունների հարցում: Այս ամենը ձեզ համար նորություն չէ, քանի որ իմ ողջ մասնագիտական գործունեությունը բաց է եղել, թեկուզ իմ կողմից հաճախ տրվող ասուլիսների միջոցով»:

Իսկ ինչ վերաբերում է «Եվրոպական ինտեգրացիա» կազմակերպության կազմում գործող «Հայացք» կիրառական քաղաքականության և հետազոտությունների վերլուծական կենտրոնին, ապա թիմը նպատակահարմար է գտել, որ Կարեն Բեքարյանը հանձնի կենտրոնի ղեկավարությունը: Այս առթիվ Բեքարյանը մասնավորապես նկատեց.

«Ուզում եմ նաև հավելել, որ ստեղծվելու օրվանից ղեկավարել եմ և հանդիսանում եմ «Հայացք» կիրառական քաղաքականության և հետազոտությունների վերլուծական կենտրոնի հիմնադիր անդամ: Վերլուծական կենտրոնը նույնպես կազմված է փորձառու վերլուծաբաններից: Ինչպես ՀԿ նախագահի պաշտոնը պահպանելու որոշման դեպքում, այս դեպքում նույնպես ընդհանրական քննարկման արդյունքում, որոշում կայացվեց, որ ես հանձնում եմ ղեկավարի պաշտոնը կենտրոնի փորձագետ Նարեկ Մինասյանին, ով բավական փորձառու մասնագետ և վերլուծաբան է: Որոշումը ելնում է ծանրաբեռնվածությունների վերբաշխման տրամաբանությունից»:

«Ուրախությամբ ուզում եմ փաստել, որ երկար և ծանր քննարկումներից հետո թե՛ այս և թե՛ ՀԿ նախագահի պաշտոնը պահպանելու դեպքում որոշումը թիմի կողմից ընդունվել է կոնսենսուսով», - հավելեց Կարեն Բեքարյանը:

Ասուլիսի ժամանակ Կարեն Բեքարյանը նաև անդրադարձավ այն հարցին, թե ինչ կփոխի ԱԺ պատգամավորությունն իր կյանքում: Վերջինս մասնավորապես նկատեց, որ չի կարծում, թե ԱԺ մանդատն իր կյանքում գլոբալ որևէ փոփոխության պատճառ կդառնա:

Անդրադառնալով խորհրդարանական գործունեությունից իր ակնկալիքներին՝ Բեքարյանը ասաց. «Ինչ վերաբերում է ակնկալիքներին, ապա կարծում եմ, որ ԱԺ մանդատն ինձ համար կարևոր հարցերի և խնդիրների լուծման հարցում մասնակցության ավելի լայն հնարավորություններ կընձեռի: Այլ բան է հանրության հետ աշխատելը, այլ բան է որոշում ընդունելու գործընթացի վրա ազդեցության հնարավորություն ունենալը»:

Անդրադառնալով նաև ԱԺ պատգամավոր դառնալու իր դրդապատճառներին՝ Բեքարյանը նկատեց, որ իր կողմից տրամաբանական չէր լինի մերժել նման հնարավորությունը.

«Ես կարծում եմ, որ ցանկացած քաղաքացի Հայաստանի Հանրապետությունում ունի ազդեցության լծակներ: Երբ երկրում կա ազատ մեղիա, երբ արտահայտված

յուրաքանչյուր կարծիք կարող է լսելի դառնալ, սա իր հերթին ստեղծում է ազդեցության լծակներ: Բնականաբար այդ լծակները տարբեր են լինում: ԱԺ մանդատը ունենալու դեպքում դու կարողանում ես որոշման ընդունման գործընթացում քո լուսման ունենալ: Երբ նման հնարավորության առաջարկ ես ստանում, իմ կարծիքն է, որ պետք է ընդունել, որովհետև, եթե կարող ես օգտակար լինել չլինելը աննորմալ է»:

«Թե հնարավորությունը որքանո՞վ կլինի արդյունավետ, որքանո՞վ կբավարարի իմ ակնկալիքները, անկեղծ ասաց չեմ կարող ասել: Ինքս 10 տարի աշխատել եմ ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովում՝ որպես փորձագետ, բայց միևնույն է շատ բան է փոխվում ժամանակային դինամիկայի մեջ: Քո ներդրումն ինչ չափով կստացվի, դա արդեն ցույց կտա աշխատանքային գործունեությունը», - եզրափակեց Բեքարյանը:

Խոսքի վերջում Բեքարյանն անդրադարձավ այն գերակա ուղղություններին, որոնց առանձնահատուկ ուշադրություն կդարձնի իր խորհրդարանական գործունեության ընթացքում:

«Այս հարցում հնարավոր չէ որևէ բան օդից վերցնել և հիմքը պետք է լինի քո անցած ճանապարհը: Ուստի, առանձնացնեմ մի քանի գերակա ուղղություն: Նախևառաջ կուզենայի ընդգծել խորհրդարանական դիվանագիտության կարևորությունը և դրա տրամադրած գործիքները արտաքին քաղաքականության ոլորտում, խորհրդարանի դերը հակամարտությունների տրանսֆորմացիայում», - նշեց Բեքարյանը:

Նա նշեց, որ հանրային խորհրդում ունի երկար տարիների աշխատանքային փորձի և խորհրդարանում իր գործունեության ընթացքում կշարունակի հետևել հանրային խորհրդի գործունեությանը՝ չնայած ԱԺ մանդատը ստանալու պատճառով, ըստ օրենքի՝ պետք է հրաժարվի Հանրային խորհրդին իր անդամակցությունից:

Բացի այդ, լինելով մասնագիտությամբ մաթեմատիկոս, Բեքարյանը խոստացավ առանձնակի ուշադրություն դարձնել գիտական ոլորտի զարգացմանը Հայաստանում:

Եվ որպես վերջին հիմնական գերակայություն՝ Բեքարյանն առանձնացրեց երիտասարդության ոլորտը՝ նկատելով. «Եվրոպական ինտեգրացիան» իր ողջ գործունեության ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձել երիտասարդության ոլորտին, և տարամաբանական չի լինի, որ իմ խորհրդարանական գործունեության ընթացքում անտեսեմ այդ ոլորտը»: